ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 128/10

Քաղ. Երեւան **30 հունիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. հունիսի 30-ի նիստում (արձանագրություն N81/4) քննարկեց «ՊԻԿ-ՊԱԿ» ՍՊԸ-ի 2010թ. ապրիլի 29-ի «Jolen, Inc., 25 Walls Drive Fairfield, Connecticut 06430 (US)» ընկերությանը պատկանող «JOLEN» (N 824467) համակցված ապրանքային նշանի գրանցման գործողությունը վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ դիմումը:

Դիմումում նշված է, որ «ՊԻԿ-ՊԱԿ» ՍՊԸ-ին հայտնի է դարձել, որ «Jolen, Inc» ընկերությանը պատկանող «JOLEN» ԱԾՄԴ 03-րդ դասի համար գրանցված ապրանքային նշանը, գրանցման պահից սկսած ավելի քան 5 տարի Հայաստանի Հանրապետության տարածքում չի օգտագործվել:

Համաձայն «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ Օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ կետի՝ «Ապրանքային նշանի գրանցման գործողությունը կարող է ցանկացած անձի դիմումի հիման վրա, բողոքարկման խորհրդի որոշմամբ, դադարեցվել վաղաժամկետ բոլոր ապրանքների, որոնց համար այն գրանցված է, կամ դրանց մի մասի նկատմամբ, եթե ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված 5 տարվա ընթացքում, կամ դիմումն ավելի ուշ ներկայացնելու դեպքում դրան անմիջականորեն նախորդող 5 տարվա ընթացքում այն ընդհանրապես չի օգտագործվել կամ օգտագործվել է ոչ ողջամիտ ծավալներով ապրանքային նշանի սեփականատիրոջ կամ սույն օրենքի 26 հոդվածի համաձայն լիցենզային պայմանագրով այդ իրավունքն ունեցող անձի կողմից»: Դիմողը, ղեկավարվելով Օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ կետով, խնդրում է վաղաժամկետ դադարեցնել «JOLEN» (N IR 824467) ապրանքային նշանի գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում:

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացնելիս նշվեց, որ «ՊԻԿ-ՊԱԿ» ՍՊԸ-ի կողմից դիմում է ներկայացվել «Jolen, Inc., 25 Walls Drive Fairfield, Connecticut 06430 (US)» ընկերությանը պատկանող «JOLEN» (*N* 824467) համակցված ապրանքային նշանի գրանցման գործողությունն վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ: Ընկերությանը հայտնի է դարձել, որ Jolen, Inc ընկերությանը պատկանող «JOLEN» ԱԾՄԴ 03-րդ դասի համար գրանցված ապրանքային նշանը, գրանցման պահից սկսած ավելի քան 5 տարի Հայաստանի Հանրապետության տարածքում չի օգտագործվել:

Նշվեց, որ «Jolen, Inc., 25 Walls Drive Fairfield, Connecticut 06430 (US)» ընկերությանը ծանուցվել է եւ համապատասխան փաստաթղթով արձանագրված է, որ ընկերության ներկայացուցիչը ստացել է ծանուցագիրը, բայց մինչ նիստի օրը Բողոքարկման խորհուրդը որեւէ արձագանք չի ստացել սեփականատիրոջից: Կոլեգիան որոշեց դիմումը բավարարել:

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման» կարգի 80-րդ կետի 1-ին ենթակետով՝ բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «ՊԻԿ-ՊԱԿ» ՍՊԸ-ի դիմումը եւ «JOLEN» (N 824467) համակցված ապրանքային նշանի գրանցումը ԱԾՄԴ 03-րդ դասի ապրանքների համար վաղաժամկետ դադարեցնել:

Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումն ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում դիմել դատարան:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան